ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 136- Ա **29 ապրիլի 2015 թ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ>>, <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ>> ԵՎ <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ>> ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1354-Ն հրամանով հաստատված <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների անցկացման կարգերի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2015 թվականի <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների մարզային փուլի գնահատող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1354-Ն հրամանով հաստատված <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների անցկացման կարգերի պահանջների՝ 2015 թվականի մայիսի 15-ին կազմակերպել և անցկացնել մրցույթների մարզային փուլը՝ ժամը 11^{00}-ին, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թվականի ապրիլի 29-ի
N 136-Ա որոշման

Կազմ

ՀՀ Գեղարքունիքի մարզում 2015 թվականի <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների մարզային փուլի գնահատող հանձնաժողովի

Հակոբյան Ա. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ (նախագահ)

Բաղալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Չիչակյան Տ. - ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Բավեյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Բիձյան Մ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Ղազարյան Խ.- Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոցի տնօրեն

Ղարիբյան Ա. – Սևանի թիվ 3 <<Հեքիաթ>> մանկապարտեզի տնօրեն

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ